

# ՅԱՐՈՒԹ ՖԱԶԼԵԱՆԻ

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

### ՆՈՒԻՐՈՒԱԾ Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ

#### ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ

Պրազիլ, Ամերիկա եւ Քանատա ընդգրկող շրջապտոյտէ մը ետք, Դոկտ. Ուալիտ Ղըլմիէ եւ լեհ դեկավար Ֆոյչէք Չափըլի հետ պետական սիմֆոնիք նուագախումբին դեկավարութիւնը բաժնեկցող մայեսթօր Յարութ Ֆազլեան վերսկսաւ պատրաստուելու գործերով լեցուն նոր եղանակի մը, որ իր գործունէութիւնը պիտի սկսի յառաջիկայ Հոկտեմբեր ամսուն:

Ֆազլեան այս միջոցին կը պատրաստէ յատուկ հանդիսութիւն մը, որ տեղի պիտի ունենայ Նոյեմբեր ամսուան 21ին, որուն ընթացքին պիտի նուագուի համաշխարհային երաժիշտ Արամ Խաչատրեանի յօրինումներէն՝ անոր ծննդեան 100ամեակին առիթով:

Պետական նուագախումբին մասին խօսելով, Ֆազլեան կ'ըսէ, թէ բաղդատելով երէկուան եւ այսօրուան միջեւ, սիմֆոնիք նուագախումբը քաջալերող ժողովուրդին վիճակը բաւական յառաջդիմած է: Ան կ'աւելցնէ, թէ իւրաքանչիւր դար եւ իւրաքանչիւր սերունդ ունի իր երաժշտութիւնը եւ թէ ինք կը լսէ ամէն տեսակ երաժշտութիւն:

«Մայեսթրօ պաշտօնը դիւրին չէ» կ'ըսէ Ֆազլեան, «այդ ինքնին մասնագիտութիւն մըն է, որ կը կարօտի հզօր կարողութեան եւ յատուկ քարիզմայի: Երաժշտական ներդաշնակութիւնն ձեռք ձգելու հիմնական եւ ամէնէն կարեւոր պայմանն է ունենալ երաժշտական զարգացում»: Երաժշտական իր ունեցած ընդարձակ զարգացումին հանդերձ, Յարութ Ֆազլեան կը նախընտրէ մնալ դեկավարութեան պաշտօնին վրայ, թէեւ ինք կարողութիւն ունի նուագելու եւ յօրինելու:

Յարութ Ֆազլեան այժմ կը մարզէ Քասլիքի երգչախումբը, որուն համար ան զետեղած է երգելու նոր ընթացք մը, որ չի սահմանափակուիր եկեղեցական երգեցողութեան մէջ, այլ կը հասնի աւելի հեռու մարզերու:

Քանատա կատարած իր այցելութեան ընթացքին, Ֆազլեան ստացած է Արամ Խաչատրեանի երաժշտութիւնները ներկայացնելու երեք հանդիսութիւններու հրաւերներ, յառաջիկայ Յունուար ամսուն: Ֆազլեան երեք հանդիսութիւններ եւս պիտի ներկայացնէ յառաջիկայ տարի Պրազիլի մէջ: Իսկ այս տարի, պետական սիմֆոնիք նուագախումբին հետ Յարութ Ֆազլեան կը պատրաստէ միացեալ հանդիսութիւններ սուրիական պետական նուագախումբին հետ, որոնք տեղի պիտի ունենան Դամասկոսի նորակառոյց օփերայի տան մէջ եւ այլ հանդիսութիւններ Պէյրութի մէջ:

